



ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՅԻ

ՇԱՐԱԿԱՆ Ա. ԾՆՆԴԵԱՆ

Խորհուրդ մեծ և սքանչելի որ յայսմ ատուր յայտնեցաւ.
Հովիւքն երգեն ընդ հրեշտակս, տան աւետիս աշխարհի:
Ծնաւ նոր արքայ ի Բեթղեհէմ քաղաքի.
Որդիք մարդկան օրհնեցէք, զի վասըն մեր մարմնացաւ,
Անբաւելին երկնի և երկրի, ի խանձարուրս պատեցաւ.
Ո՛չ մեկնելով ի Հօրէ, ի սուրբ այրին բազմեցաւ,
Այսօր ցնծան երկինք ի վերուստ մեծապայծառ աւետօք.
Եւ արարածք ամենայն զգեցան հանդերձ փրկութեան:
Այսօր յայրին ընծայեցաւ Քրիստոս Որդին Աստուծոյ.
Եւ հրեղինաց բազմութիւնքն յերկնից յերկիր վայր իջեալ:
Այսօր հովուացըն տեսեալ զարդարութեան արեգակն.
Եւ ընդ հրեշտակըս երգէին փառք ի բարձունս Աստուծոյ:

ԳՐԻԳՈՐ Բ ՎԿԱՅԱՍԵՐ

ՏԱՂ ԶՐՕՐՀՆԵԱՑ

Ո՛վ զարմանալի, խորհուրդ այս մեծ յայտնեալ.
Արարիչն Աստուած, ի Յորդանան եկեալ:
Կամէր մըկըրտիլ, ի ծառայէն իւրմէ.
Չառնոյր Կարապետն, ըզմըկըրտելն ի յանձն:
Յորդանան լուեալ, փախըստական դառնայր.
Վըտակ առ վըտակ, պատգամատուր լինէր:

Գե՛տ, մի՛ գարհուրիր, քո արարիչն եմ ես.
 Եկեալ մըկըրտիմ, և լուսնամ ըզմեզս:
 Յիսուս յառաջեաց, աստուածութեամբն ի ջորն.
 Հանդերձ Յօհաննու, Յիսուս ի գետն եմուտ,
 Երկինք պատուեալ, ձայն ի յերկնից իջեալ,
 Զայն Հօր ի բարձանց, Որդոյն իր վըկայեալ:
 Դա է իմ որդի, ընդ որ հաճեցայ, ասէր.
 Դըմա լուարուք որդիք մարդկան ձայնէր:
 Սուրբ Հոգին իջեալ, աղանակերայ տեպեամբ,
 Յայտնեալ ցուցանէր, Հօր փառակից զՈրդին:
 Արդ օրհնեալ է Հայր, և համագոյ Որդին,
 Հոգւոյն ճշմարտի, փառք յախտանս, ամէն:

ՀՈՎՀԱՆՆԵՍ ԵՐԶՆԿԱՅԻ

ԱՅԼ ՏԱՂ ԶՐՕՐՀՆԵԱՅ

Այսօր ձայնն հայրական, յերկնից իջեալ հաճոյական.
 Միրեցելոյ Որդոյ վկայն, աչ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան.
 Յորդորական ձայնի երգէր մեծ կարապետըն Յօհաննէս:
 Այսօր երկիրս երկինք եղեն, երևելով Աստուածորդոյն,
 Միրով եկեալ ի մկըրտիլ:
 Այսօր վերին դասք հրեշտակաց, ուրախացան
 Ընդ սուրբ գալուստ Աստուածորդոյն ի Յորդանան.
 Այսօր եկեալ Աստուածորդին, ի Յորդանան խոնարհութեամբ,
 Զրով մըկրտիլ ի Յօհաննէ.
 Այսօր մկըրտիչըն Յօհաննէս, ի մըկըրտիլըն հրաժարէր.
 Թէ ինձ պարտ է ի քէն մըկրտիլ.
 Այսօր գոչէր քաղցըր ձայնի, Աստուածորդին կարապետին,
 Պարտ էր զօրէնըն կատարել.
 Այսօր Յօհաննէսն դողալով, ձեռօքն ըզՏէրըն մըկըրտէր,
 Ի մեծ յորձանսն Յորդանանու.
 Այսօր բացեալ փակեալ երկինքն, գոր յանցանօք փակեաց Ադամ,
 Ի Հայր Որդի զնա կարդալով.
 Այսօր Հոգին աղանակերայ, իջեալ յերկնից ի Յորդանան,
 Իր փառակցին վըկայելով.
 Այսօր երկինք զարդարեցան, երկիրս ծաղկօք զուարճացան,
 Զաստուած տեսեալ ի Յորդանան.
 Այսօր հրեշտակք անդրէն պարեն, ժողովք ամէն օրհնաբանեն,
 Ըզմըկըրտեալն Աստուած գովեն.
 Այ յորդորէ, գետ յորդորէ, գետ Յորդանան:

